

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N <<<< ԱԺ ՇՀԾՁԲ-15/3-2017>>**

ք. Երևան

12  
..... հունվարի 2017թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՐԿՈՄԱՎՏՈՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *տրանսպորտային միջոցների ֆեխնիկական սպասարկման* ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում՝ մերա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 17500000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի պարտավորությունները կստանձնվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2017թ.:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում ծառայություն կարող է մատուցվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի շրջանակում կկնքվի լրացուցիչ պայմանագիր /համաձայնագիր/: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Աժ աշխատակազմ  
ք. Երևան, Բաղրամյան պող.19  
ՀՎՀՀ 00008519  
«ԱՅ գործառնական վարչություն  
ՀՀ 900011020089  
«Աժ աշխատակազմի ղեկավար  
Հ.Թովմասյան»



(ստորագրություն)  
Կ.Տ.

### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԿԱՐԿՈՄԱՎՏՈՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ  
ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1  
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ  
Հ/Հ 217002121630-001  
ՀՎՀՀ 00131374  
Էլ. հասցե՝ [sto.karcomauto@rambler.ru](mailto:sto.karcomauto@rambler.ru)  
Ա. Հովսեփյան



(ստորագրություն)  
Կ.Տ.

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ձեռքբերվող ծառայության նկարագիր					
NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ըստ չափաբաժինների			
		Չափաբաժին I	Չափաբաժին II	Չափաբաժին III	Չափաբաժին IV
		ԳԱՁ մակնիշի հետևի տանող ա/մ	5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ	Միկրոավտոբուս ա/մ
1	2	3	6	7	8
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ	Այլ պետությունների արտադրության ա/մ		
1	Բռնկման համակարգի ստուգում	3000	5000	5000	5000
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում		0	0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3000	3000	3000	3000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
13	ABS համակարգի ստուգում		0	0	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0	0
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը				
18	Շարժիչի հանում և տեղադրում	17000	50000	50000	50000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	10	10	10	10
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		10	10	10
22	Շարժիչի վերանորոգում	25000	60000	60000	60000
23	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
24	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	2000	5000	5000	5000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	2000	3000	3000	3000
27	Նույնը աջի համար (V6)		10	10	10
28	Նույնը ձախի համար (V6)		10	10	10

29	Շարժիչի բլուկի գլխիկի հանում և տեղադրում	5000	15000	15000	15000
30	Նույնը աջի համար (V6)		10	10	10
31	Նույնը ձախի համար (V6)		10	10	10
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10	10	10	10
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	6000	6000	6000	6000
34	Փակամի խցուկի փոխարինում	3000	4000	4000	4000
35	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում		10	10	10
38	Նույնը V6-ի աջի դեպքում		10	10	10
39	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում		2000	2000	2000
41	Հրիչների փոխարինում SOHC	1000	2000	2000	2000
42	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
43	Ատամնավոր փոկի փոխարինում	10	10000	10000	10000
44	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
45	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
46	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	1000	2000	2000	2000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
48	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
50	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
51	Նույնը կոնդիցիոների դեպքում		10	10	10
52	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	1000	1000	1000	1000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		10	10	10
54	Մխոցային օդակների փոխարինում	4000	4000	4000	4000
55	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
56	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
57	Թափանիվի հանում և տեղադրում	1000	2000	2000	2000
	<b>2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>				
58	Յուղի և յուղի գոխի փոխարինում	2000	3000	3000	3000
59	Յուղի պոմպի փոխարինում	3000	3000	3000	3000
60	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
61	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
62	Ղեկավարման բլուկի վերանորոգում	3000	5000	5000	5000
63	Բռնկման կարգավորում	100	100	100	100
64	CO կարգավորում	500	500	500	500
65	խարճարակի հանում և տեղադրում	2000	10	10	10
66	խարճարակի վերանորոգում	5000	10	10	10
67	Օդի գոխի փոխարինում	1000	2000	2000	2000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	9000	9000	9000	9000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	9000	9000	9000	9000
70	Բենզամղիչի փոխարինում	2000	10000	10000	10000
71	Վառելիքի գոխի փոխարինում	1500	2000	2000	2000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
73	Տրամյորի հանում և տեղադրում	100	10	10	10
74	Տրամյորի վերանորոգում	10	10	10	10
	<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>				
75	Հովիարի փոկի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
76	Հովիարի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	5000	8000	8000	8000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		10	10	10
80	Ռադիատորի վերանորոգում	3000	5000	5000	5000

81	Թերմոստատի փոխարինում	3000	6000	6000	6000
82	Ջրի պոմպի փոխարինում	4000	8000	8000	8000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում		10	10	10
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
85	Ջրի պոմպի վերանորոգում	100	100	100	100
86	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10
88	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	2000	2000	2000
89	Խլարարի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
90	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
91	Ռադիատորի փոդրակի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>				
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	4000	10	4000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	10	1000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1000	1000	10	1000
95	Կցորդման ուռնակի հանում և տեղադրում	500	500	10	500
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	10	1000	10	1000
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	10000	40000	10	40000
98	ՓՏ-ի վերանորոգում	10000	40000	10	40000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	100	100	10	100
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	100	100	10	100
101	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	10	1000	10	1000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում		1000	1000	10
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում		1000	1000	10
104	Նույնը V6-ի համար		10	10	10
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում		50000	50000	10
106	Նույնը V6-ի համար		10	10	10
107	ԱՓՏ-ի վերանորոգում		80000	80000	10
108	Նույնը V6-ի համար		10	10	10
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում		10000	10000	10000
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>				
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		10	1000	10
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով		10	40000	10
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում		10	4000	10
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	10	7000	7000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	100	10	100	100
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	10	5000	5000
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	2000	10	4000	4000
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>				
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10000	10	20000	20000
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	16000	10	20000	20000
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100	10	100	100
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում	2000	10	8000	8000
121	Կիսատնու առանցքակալի փոխարինում	1000	10	6000	6000
	<b>7. Կախոց</b>				
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	100	100	100	100
123	Տրավերսի հանում և տեղադրում	5000	25000	25000	25000

124	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում		7000	7000	7000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3000	7000	7000	7000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	10	10	10	10
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		100	100	100
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար			10	10
129	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում		100	100	100
130	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում		100	100	100
131	Գնցամեղմիչի թասակի փոխարինում	10	1000	1000	1000
132	Զսպանակի հանում և տեղադրում	1000	2000	2000	2000
133	Զսպակի հանում և տեղադրում	4000		10	4000
134	Զսպակի վրանների փոխարինում	2500		10	4000
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000	5000	5000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3000	6000	6000	6000
137	Ներքևի լծակի վրանների փոխարինում	1000	2000	2000	2000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2000	4000	4000	4000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
140	Ծոճանակային լծակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	2000	4000	4000	4000
142	Վերևի լծակի վրանների փոխարինում	1000	2000	2000	2000
143	Գնդե հողակապերի փոխարինում	1500	3000	3000	3000
144	Ծայրակների հանում և տեղադրում	1000	3000	3000	3000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
146	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	1000	3000	3000	3000
147	Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում	100	100	100	100
148	Հետևի զսպանակի փոխարինում	10	10	10	10
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000	5000	5000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	10	10	10	10
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1000	3000	3000	3000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում		2000	100	2000
154	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում		2000	100	2000
155	Անվաքաքի կարագավորում		12000	12000	12000
156	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար		10	10	10
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>				
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	8000	25000	25000	25000
158	Նույնը V6-ի համար		10	10	10
159	Ղեկային կալունի վերանորոգում	8000	40000	40000	40000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում	500	100	100	100
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	100	100	100	100
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	2000	3000	3000	3000
163	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	100	100	100	100
165	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
166	Հիդրոուժեղարարի փողոսակի հանում և տեղադրում	2000	4000	4000	4000
167	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	10	10	10	10

169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10	100	100	100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	10	100	100	100
	<b>9. Արգելակային համակարգ</b>				
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000	4000	4000	4000
172	Գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5000	8000	8000	8000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
175	Բանվ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000
176	Արգելակային համակարգի օդահանում	1500	4000	4000	4000
177	Առջևի սուլպարտի հանում և տեղադրում	2000	4000	4000	4000
178	Հետևի սուլպարտի հանում և տեղադրում		3000	3000	3000
179	Առջևի սուլպարտի վերանորոգում	500	500	500	500
180	Հետևի սուլպարտի վերանորոգում		500	500	500
181	Արգելակային փողրակի փոխարինում	2000	3000	3000	3000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2500	4000	4000	4000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում		100	100	100
184	Հետևի կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2000	4000	4000	4000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	10	4000	4000	4000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	500	1000	1000	1000
188	ABS-ի հանում և տեղադրում		1000	1000	1000
189	ABS-ի վերանորոգում		100	100	100
190	Չեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	2000	4000	4000	4000
191	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	500	500	500	500
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>				
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	1000	1000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	1000	2000	2000	2000
194	Գեներատորի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
195	Նույնը V6-ի դեպքում		10	10	10
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	10	10	10	10
197	Գեներատորի վերանորոգում	5000	10000	10000	10000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
199	Մեկնարկիչի վերանորոգում	5000	10000	10000	10000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	1500	3000	3000	3000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	10	1000	1000	1000
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
206	Արագաչափի հանում և տեղադրում	10	500	500	500
207	Ազդանշանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	3000	5000	5000	5000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	5000	8000	8000	8000
211	Սազնիտոլայի տեղադրում	2000	2000	2000	2000
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
213	Էլ/հաղորդակարների մասնակի վերանորոգում	1000	1000	1000	1000
214	Էլ/հաղորդակարների հիմն. խուլոցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000

215	Էլ/հաղորդակարների երկրորդ, խուրցի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	2000	3000	3000	3000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2000	2000	2000	2000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	1500	5000	5000	5000
219	Կոնդիցիոների լիցքավորում	10	12000	12000	12000
220	Կոնդիցիոների վերանորոգում	10	100	100	100
<b>11. Այլ ծառայություններ</b>					
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	3000	3000	3000	3000
222	Ավտոմեքենայի վլացում	2000	3000	3000	3000
223	Աճիվի հանում և տեղադրում	500	500	500	500
224	Անվադողի վերանորոգում	1000	1000	1000	1000
225	Աճիվի բայանսավորում	1000	1000	1000	1000
226	Աճիվի վալց	100	100	100	100
227	ՇՕ-զողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1000	1000	1000	1000
228	Խառատային աշխատանքներ	1000	1000	1000	1000
229	Փակամագրոծի աշխատանքներ	1000	1000	1000	1000
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	500	500	500	500
<b>Ընդամենը ծառայություններ</b>		<b>363070</b>	<b>843440</b>	<b>866150</b>	<b>789600</b>
<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>		<b>ԳԱՀ մակնիշի հետևի տանող ա/մ</b>	<b>5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ</b>	<b>4x4 տիպի ավտոմեքենաներ</b>	<b>Միկրոավտոբուս ա/մ</b>
<b>1. Շարժիչ</b>		<b>ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ</b>		<b>Այլ պետությունների արտադրության ա/մ</b>	
1.1	Շարժիչի բլոկ	1000	1000	1000	1000
2.1	Շարժիչի գլխիկ	1000	1000	1000	1000
3.1	Բարձիկ	3000	40000	40000	40000
4.1	Շարժիչի գլխիկի միջադիր	2400	10000	10000	10000
5.1	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	1200	2000	2000	2000
6.1	Շարժիչի բաշխիչ լիսեռ	20000	35000	35000	35000
7.1	Շարժիչի փական դուրս մղող	2400	5000	5000	5000
8.1	Շարժիչի փական ներս մղող	2400	5000	5000	5000
9.1	Շարժիչի փականի խցուկ	1000	1200	1200	1200
10.1	Ծնկածև լիսեռ	1000	1000	1000	1000
11.1	Ծնկածև լիսեռի խցուկ առջևի	1200	5000	5000	5000
12.1	Ծնկածև լիսեռի խցուկ հետևի	1200	8000	8000	8000
13.1	Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ	4000	8000	8000	8000
14.1	Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ	2400	5000	5000	5000
15.1	Հեմակային տափողակ	500	600	600	600
16.1	Մխոց	4800	15000	15000	15000
17.1	Մխոցային օղակներ	8000	15000	15000	15000
18.1	Ատամնանիվ	2400	6000	6000	6000
19.1	Ատամնավոր փոկ	10	12000	12000	12000
20.1	Շղթա	4000	5000	5000	5000
21.1	Հիդրոծգան	3000	5000	5000	5000
22.1	Հրիչ	1200	1200	1200	1200
23.1	Հիդրոհրիչ	3600	5000	5000	5000
24.1	Բաշմակ	1200	4800	4800	4800
25.1	Հանգստարար	2000	4800	4800	4800
26.1	Թափանիվ	100	100	100	100
27.1	Թափանիվի պսակ	8000	12000	12000	12000
28.1	Խցուկ բաշխիչ լիսեռի	10	3600	3600	3600
29.1	Շկիվ	3000	6000	6000	6000

30.1	Շարժաթև	3600	8000	8000	8000
31.1	Կարտերի միջադիր	500	1000	1000	1000
32.1	Միջադիր	2400	2400	2400	2400
	<b>2. Ղեկավարման, սեման և յուղման համակարգ</b>				
33.1	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3600	3600	3600	3600
34.1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000	4000	4000	4000
35.1	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5000	6000	6000	6000
36.1	Յուղի գտիչ	1800	6000	6000	6000
37.1	Յուղի պոմպ	4000	8000	8000	8000
38.1	Յուղի պոմպի շարժաբեր	100	100	100	100
39.1	Յուղի ռադիատոր	3000	100	100	100
40.1	Յուղի փողրակ	1200	6000	6000	6000
41.1	Յուղի ծորակ	1000	100	100	100
42.1	Վառոցքի մոմ	2000	5000	5000	5000
43.1	Բենզոլաք	100	100	100	100
44.1	Խառնարակ	100	100	100	100
45.1	Խառնարակի վերանորոգման հավաքածու	100	100	100	100
46.1	Ինժեկտորի ֆորսուճակ	12000	20000	20000	20000
47.1	Վառելանյութի մղիչ էլեկտրական	20000	36000	36000	36000
48.1	Վառելանյութի մղիչ մեխանիկական	10000	1000	1000	1000
49.1	Վառելանյութի գտիչ	3000	12000	12000	12000
50.1	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	1000	5000	5000	5000
51.1	Վառելանյութի փողրակ	2400	3600	3600	3600
52.1	Աքսելերատորի ճոպան	1000	2000	2000	2000
53.1	Օդի գտիչ	3600	12000	12000	12000
54.1	Զերմաստիճանային տվիչ	2400	1200	1200	1200
55.1	Յուղի տվիչ	2400	3600	3600	3600
56.1	Բաշխիչ լիսեռի տվիչ	3600	6000	6000	6000
57.1	Օդի ծախսի տվիչ	1000	35000	35000	35000
58.1	Արագաչափի տվիչ	3600	3600	3600	3600
59.1	Հովհարի տվիչ	500	3600	3600	3600
60.1	Զրի տվիչ	500	1000	1000	1000
61.1	Բենզոլաքի տվիչ	2400	3600	3600	3600
62.1	Մարման ընթացքի կարգավորիչ	10	10	10	10
63.1	Մարման ընթացքի տվիչ	10	10	10	10
64.1	Ղեկավարման համակարգիչ	1000	1000	1000	1000
65.1	Պարապ ընթացքի տվիչ	1000	1000	1000	1000
66.1	Դրոսելային փականի տվիչ	3000	5000	5000	5000
67.1	Թթվածնի տվիչ	8000	15000	15000	15000
	<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>				
68.1	Հովհարի փոկ	4000	15000	15000	15000
69.1	Հովհար	12000	18000	18000	18000
70.1	Ռադիատոր	28000	50000	50000	50000
71.1	Ընդարձակող բաք	3600	12000	12000	12000
72.1	Ռադիատորի փողրակ	3000	6000	6000	6000
73.1	Թերմոստատ	3000	8400	8400	8400
74.1	Զրի պոմպ	15000	25000	25000	25000
75.1	Զրի պոմպի առանցքակալ	10	10	10	10
76.1	Զրի պոմպի թևակ	10	10	10	10
77.1	Սառեցման հեղուկ 1 լիտր	4000	4000	4000	4000
78.1	Զրի պոմպի սռնանիվ	10	10	10	10
79.1	Հոլովակ	3600	6000	6000	6000
80.1	Փոկ	100	100	100	100
81.1	Փոկ կոնդիցիոներ	10	10	10	10
82.1	Ծորակ	2000	2000	2000	2000
83.1	Խլարարի ներդիր	500	2000	2000	2000

84.1	Խլարարի կախոց	500	2000	2000	2000
85.1	Կրոնշտեյն	500	500	500	500
86.1	Անուր (Խամուս)	500	1000	1000	1000
87.1	Խլարար	16000	50000	50000	50000
88.1	Ռեզոնատոր	100	100	100	100
89.1	Վառարանի ճաղիատոր	5000	20000	20000	20000
	<b>4, Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>				
90.1	Կցորդման բանվորական զլան	5000	6000	10	6000
91.1	Կցորդման զլխավոր զլան	7000	15000	10	15000
92.1	Կցորդման զլանի վերանորոգման հավաքածու	500	500	10	500
93.1	Կցորդման տանող սկավառակ	29000	48000	10	48000
94.1	Կցորդման տարվող սկավառակ	13500	35000	10	35000
95.1	Կցորդման առանցքակալ	6600	8000	10	8000
96.1	Կցորդման փողրակ	3000	5000	10	5000
97.1	Փոխանցման տուփ	1000	1000	10	1000
98.1	ՓՏ-ի առջևի խցուկ	1000	2400	2400	2400
99.1	ՓՏ-ի հետևի խցուկ	600	2400	2400	2400
100	ՓՏ-ի առանցքակալ	4800	6000	10	6000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	1000	1000	10	1000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	20000	1000	10	1000
103	ՓՏ-ի եղանիկ	3600	5000	10	5000
104	ՓՏ-ի ատամնանիվ	5000	6000	10	6000
105	Համաժամիչ	2400	5000	10	5000
106	Մուֆտ	3600	6000	10	6000
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1200	8000	10	8000
108	ԱՓՏ-ի զտիչ		18000	18000	15000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու		1000	1000	1000
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		40000	40000	100
111	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	3000	3600	3600	3600
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր		8000	8000	8000
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10	10	10	10
114	Հերմետիկ	3000	4000	4000	4000
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>				
115	Բաշխիչ տուփ	10	10	1000	1000
116	Բաշխիչ տուփի խցուկ	10	10	3600	3600
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	10	10	5000	5000
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	10	10	5000	5000
119	Բաշխիչ տուփի լիսեռ	10	10	1000	1000
120	Կարդանային լիսեռ	40000	10	60000	60000
121	Էլաստիկ մուֆտ	10	10	6000	6000
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	4800	10	10000	10000
123	Կարդանային լիսեռի խաչուկ	6000	10	20000	20000
	<b>6. Առջևի կամ հետևի կամրջակներ</b>				
124	Հետևի կամ առջևի կամրջակ	1000	10	1000	1000
125	Ռեդուկտոր	1000	10	5000	5000
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	50000	10	80000	80000
127	Դիֆֆերենցիալ	20000	10	24000	24000
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	3600	10	10000	10000
129	Տանող ատամնանիվի խցուկ	1200	10	2400	2400
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	4800	10	6000	6000
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	2400	10	6000	6000
132	Կիսատռնի	20000	10	50000	50000
133	Կիսատռնու առանցքակալ	5000	10	10000	10000
134	Կիսատռնու միջադիր	10	10	10	10
135	Կիսատռնու խցուկ	1000	10	2000	2000

136	Կարգավորիչ տափողակ	200	200	500	500
	<b>7. Կախոց</b>				
137	Տրավերս	1000	1000	1000	1000
138	Կրոնշտեյն	1000	1000	1000	1000
139	Չախ կամ աջ հողակապ		50000	50000	50000
140	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց		8000	8000	8000
141	Անվակունդ		20000	20000	20000
142	Անվակունդի խցուկ		1200	1200	1200
143	Անվակունդի ներքին առանցքակալ	3600	30000	30000	30000
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	3600	1000	1000	1000
145	Չետևի անվակունդի ներքին առանցքակալ		100	100	100
146	Չետևի անվակունդի արտաքին առանցքակալ		100	100	100
147	Չախ կամ աջ հողակապի խցուկ	100	100	100	100
148	Չարվածամեղմիչի թասակ	100	7000	7000	7000
149	Չսպանակ	4000	6000	6000	6000
150	Առջևի հարվածամեղմիչ	14000	70000	70000	70000
151	Չարվածամեղմիչի փոշեթիկնոց	100	6000	6000	6000
152	Չարվածամեղմիչի վռան	600	1800	1800	1800
153	Ներքևի լծակ	9000	30000	30000	30000
154	Ներքևի լծակի վռան	2500	9600	9600	9600
155	Վերևի լծակ	1000	1000	1000	1000
156	Վերևի լծակի վռան	2000	5000	5000	5000
157	Գնդե հողակապ	4500	10000	10000	10000
158	Առջևի կայունարար	100	100	100	100
159	Առջևի կայունարարի վռան	2400	6000	6000	6000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	100	100	100	100
161	Չետևի զսպանակ	10	10	10	10
162	Չետևի ցնցամեղմիչ	12000	40000	40000	40000
163	Չետևի մետաղաձող (շտանգա)	3000	5000	5000	5000
164	Չետևի մետաղաձողի (շտանգա) վռան	1200	6000	6000	6000
165	Չետևի անկյունագծային լծակ	10	100	100	100
166	Անկյունագծային լծակի վռան	10	4800	100	4800
167	Չսպակ (ռեստորա)	20000	10	20000	20000
168	Չսպակի վռան	3000	10	6000	6000
169	Չսպակի միջադիր	600	10	1000	1000
170	Չսպակի բռնիչ	1000	10	1000	1000
171	Աջ կամ ձախ ձգան	6000	18000	18000	18000
172	Ծայրակալ	2400	9600	9600	9600
173	Չզան մեջտեղի	8000	9600	9600	9600
174	Անվահեծ	100	100	100	100
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>				
175	Ղեկային կալուն	1000	1000	1000	1000
176	Ղեկային կալունի առանցքակալ	5000	1000	1000	1000
177	Ղեկային կալունի խաչուկ	5000	5000	5000	5000
178	Չիդրոուժեղարար	1000	1000	1000	1000
179	Չիդրոուժեղարարի փոկ	100	100	100	100
180	Չիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	5000	8000	8000	8000
181	Չիդրոուժեղարարի պոմպ	100	1000	1000	1000
182	Չիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100	100	100	100
183	Ղեկային ձող	100	100	100	100
184	Ղեկային ձողի ծայրակալ	100	100	100	100
185	Չիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	3000	6000	6000	6000
186	Ճոճանակ	5000	10	10	10
187	Ճոճանակի վռան	1000	10	10	10
	<b>7. Արգելակային համակարգ</b>				
188	Գլխ. զլան	8000	30000	30000	30000

189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	2000	2000	2000
190	Վակուումային ուժեղարար	20000	36000	36000	36000
191	Բանվ. գլան	3000	6000	6000	6000
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	100	100	100
193	Արգելակային փողրակ	2400	8000	8000	8000
194	Սուպպորտի ուղղորդիչ	100	100	100	100
195	Սուպպորտի մանժետ	100	100	100	100
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	6000	42000	42000	42000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ		30000	30000	30000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10800	36000	36000	36000
199	Առջևի արգելակային սկավառակ	10000	24000	24000	24000
200	Հետևի արգելակային սկավառակ	10	24000	24000	24000
201	Չեռքի արգելակի ճոպան	5000	10000	10000	10000
202	ABS-ի տվիչ	10	2000	2000	2000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	500	500	500	500
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2400	2400	2400	2400
205	Չեռքի արգելակի ճոպան	10	10	10	10
	<b>9. Էլեկտրասարքավորում</b>				
206	Գեներատոր	30000	50000	50000	50000
207	Գեներատորի դիոդային կամրջակ	7000	8000	8000	8000
208	Գեներատորի ռեկե	3000	8000	8000	8000
209	Գեներատորի առանցքակալ	1200	6000	6000	6000
210	Ստարտեր	30000	48000	48000	48000
211	Ստարտերի ռեկե	1500	6000	6000	6000
212	Ստարտերի ածուխ	3000	6000	6000	6000
213	Բենդեքս	4500	6000	6000	6000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	4500	8000	8000	8000
215	Առջևի լապտեր	1000	1000	1000	1000
216	Առջևի թարթիչ	2400	5000	5000	5000
217	Հետևի լապտեր	1000	1000	1000	1000
218	Հետևի թարթիչ	100	100	100	100
219	Արգելակային լապտեր	4000	6000	6000	6000
220	Լամպ	2400	4800	4800	4800
221	Էլեկտրական անջատիչ	2400	4800	4800	3600
222	Էլեկտրական տվիչ	20000	25000	25000	25000
223	Էլեկտրական չափիչ սարք	5000	5000	5000	5000
224	Բռնկման կողպեք	7000	12000	12000	12000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	100	100	100	100
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	8000	15000	15000	15000
227	Վառոցքային լարերի խուրց	4000	6000	6000	6000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	1000	3600	3600	3600
229	Վազքաչափ	1000	1000	1000	1000
230	Վազքաչափի ճոպան	100	100	100	100
231	Արագաչափ	100	100	100	100
232	Ազդանշան	2000	3000	3000	3000
233	Ապակեվեղացիչ	2400	3600	3600	3600
234	Ապակեվեղացիչի շարժիչ	9000	18000	18000	18000
235	Դռների կենտրոնական փական	5000	6000	6000	6000
236	Ազդանշանային համակարգ	1000	1000	1000	1000
237	Մագնիստոլա	1000	1000	1000	1000
238	Էլեկտրաամբարձիչ	7020	11800	11800	11800
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	7000	12000	12000	12000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	3600	3600	3600	3600
	<b>Ընդամենը պահեստամասեր</b>	<b>964440</b>	<b>1835160</b>	<b>2010180</b>	<b>2127120</b>

Ընդամենը ըստ չափաբաժնի	1327510	2678600	2876330	2916720
<b>Պարտադիր պայմաններ</b>				
Տեխսպասարկման կայանը պետք է հազեցած լինի առնվազն տաս ամբարձիչներով(домкрат)՝ առնվազն 2,5 տոննա բարձրացնելու կարողությամբ:				
Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից՝ մեկ օրացուցային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնությամբ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ:				
Սպասարկման ենթակա ավտոմեքենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 10 պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, հսկվող տարածքում:				
Ավտոմեքենաների սպասարկումը, որոնց քանակը միաժամանակ կարող է լինել մինչև 10, պետք է սպասարկվեն առանձին դիտահորով կամ ամբարձիչներով մեկ վայրում:				
<b>Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկ-կազմակերպչական պայմաններ</b>				
Տեխ. սպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա ստորև բերված նվազագույն հնարավորությունները՝ որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում կատարելու համար՝				
փակ և պահպանվող տարածք, տեսահսկման համակարգ, պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 10 և ավելի ավտոմեքենաների համար:				
տաքացվող բոքսեր 10 և ավելի ամբարձիչների վրա միաժամանակ աշխատելու հնարավորությամբ				
լվացման կետ ,ինչպես ավտոմոբիլի ,այնպես էլ մեքենա-մասերի համար:				
դիտափոս				
դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման անհրաժեշտ սարքավորումներ ,այդ թվում նաև այլումինի և չուգունի,ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ:				
էվակուատոր 2.5տ նվազագույն բեռնատարողության, որը կանչը ստանալուց հետո 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխ.սպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր << և Արցախի տարածք, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Վրաստան:				
կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով ,ունենա ծրագրեր և տեխնիկական գրականության ախտորոշում կատարելու համար:				
ունենա մեքենայում առկա էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն				
կատարի շարժիչի և նրա համակարգերի,ուժային և ղեկավարման համակարգերի ,ընթացքային մասի և թափքի առանձին սարքավորումների,ինչպես ընթացիկ ,այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ				
վերը նշված աշխատանքները կատարելու համար ունենա արհեստավարժ մասնագետներ ,ոչ պակաս 5 տարվա աշխատանքային փորձով				
Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ, անվաքացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, մեղմիչների ստուգման ստենդ, լուսարձակների կարգավորման ստենդ, արգելակների ստուգման ստենդ:				
աշխատանքների վրա կատարվի ինժեներական վերահսկողություն :				
<b>Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում, որը պետք է գտնվի Երևան քաղաքի վարչական տարածքում՝ սպասարկման արագությունն ապահովելու նպատակով:</b>				
<b>Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված</b>				

<p align="center"><b>Ծանոթություն՝ Վերը նշվածը անհրաժեշտության դեպքում ենթակա է տեղում ստուգման մրցույթն ավարտվելուց հետո , հայր ներկայացրած իրավաբանական անձի ներկայացուցչի հետ</b></p>	
<p align="center"><b>Երաշխիքներ</b>  <b>Ծառայությունների, պահեստամասերի և ուրիշն ղեկավարների համար 6 ամիս</b></p>	
<p align="center"><b>Պահանջվող մասնագետներ</b>  <b>10 և ավելի ավտոփականագործ</b>  <b>2 և ավելի շարժիչագործ</b>  <b>2 և ավելի ավտոէլեկտրիկ</b>  <b>անվաբացքի ուղղման մասնագետ</b></p>	
<p align="center"><b>Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում հայրը կմերժվի</b></p>	
<p align="center"><b>Ծառայության մատուցման ժամկետը</b></p>	
<b>Սկիզբը</b>	<b>Ավարտը</b>
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ Աժ աշխատակազմ  
 ք. Երևան, Բաղրամյան պող.19  
 ՀՎՀՀ 00008519  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011020089  
 ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար  
 Հ.Թովմասյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԿԱՐԿՈՄԱՎՏՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ  
 ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1  
 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ  
 Հ/Հ 217002121630-001  
 ՀՎՀՀ 00131374  
 էլ. հասցեն՝ sto-karcomauto@rambler.ru  
 Ա. Հովսեփյան



Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով

Պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և  
(Պատվիրատուի անունը)  
 \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
(Կատարողի անունը)  
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_ -- -ին հանձնման-  
 ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն